





Հովհաննիս
Գրիգոր

ՓՈՒԲՐԿ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՊԱՏԻ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՍՐՏԻՆ ՅԻՍՈՒՍԻ

ՅՅ

705204

ՓՈՔՐԻԿ ՓԼՄԵՐԴՈՒԹԻՒՆ

Ի ՊԼՏԻ

ԱՄԵՆԱՍՈՒՐՐ ՍՐՑԻՆ ՅԻՍՈՒՍԻ



Ս. ՆԵՐՍԷՍ ՀՆՈՐՀԱԼԻՈՅ ԵՐԿԵՐԷՆ

ՀԱՒԱՔԵՑ

Յ. Մ. Ք. ՅԻՍՈՒՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԷ

«Եւ զքոյս ի քոյոցս
քեզ մատուցանեմ...»

Ի. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՒԱՐԱՇՈՅ Թ. ԴՈՒՏԵԱՆ Ի ԹԻՒ

ՎԻԵՆՆԱ

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1920

Nihil obstat.

P. Stephanus d'Autume S. J.
Cpoli die 19. Martii 1920.

No. 2266.

Imprimatur

Ex Curia Archiepicali Viennensi in Austria
die 20. Martii 1920.

Dr. Josef Pfluger
Generalvikar.

Dr. Kamprath
Cancell.



ԵՐԿՈՒ ԽՕՍԿ

«Եզ կը մատուցանեմ այս փոքրիկ ժամերգութիւնն, որ շարադրուած է ի պատիւ Ամենասուրբ Սրտին Յիսուսի: Բեզի պէս հայերու հոգւոյն, մտքին, սրտին արտադրութիւնն է: Նորութիւն մը չէ: Մեր Հայրերը եւ Հայրապետները այս պաշտելի Սրտին սիրաբոլորը ջերմօրոշմներն էին: Այս պատճառաւ է որ, առանց օտարազգի Սրբոց զրուածոցը դիմելու, հնար եղաւ ինձ մեր Հայրապետներէն զրեթէ միայն Սուրբ Ներսէս Շնորհաւոյ զրուածներով շարադրել այս ժամերգութիւնը: Բարեպաշտ քրիստոնեան ասով պիտի կարենայ յագուելոյ տալ իր ջերմօրոշմներն եւ պիտի տեսնէ միանգամայն թէ մեր նախնիք ո՞րպիսի սեռն սէր կը տածէին մեր Սէր անուն Յիսուս Փրկչին հանդէպ: Տայր երկինք, որ ըլլայինք եւ մայրինք միշտ մեր Սուրբ Հարց մէյմէկ արժանաւոր զատակներն:

Եւդոկիա, 30 Մայիս 1913, ի Տօնի Ս. Սրտին
Յիսուսի:

ԺԱՆՈՒԹՈՒԹԻՒՆՔ

1. Էջ 10, տող 2.

Են որ ասեն Բան 'ստ Յովհաննու
Բնադրին մէջ՝
... Որք Բան ասեն ըստ Յովհաննու:

2. Էջ 11, տող 5-8.

Հօր ծոցածին... ծիծաղական:
Նմանութիւն մ'է.
Տես «Ներբողեան կենսատու Սուրբ
Խաչի» տող 337-340:

3. Էջ 35, տող 15-16.

Յիսուս, հեղ եւ... սրբոյն քուժ.
Տես Պաղատանք առ ամենատուրբ
Սիրան Յիսուսի էջ 52, տող 7-8:

ԳԻՂԵՐԱՅԻՆ

Ի ԳԵՄՍ ԲԱՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամեն:

Ք. Տէ'ր, եթէ զըթուանս իմ բանաս,
Ս. Բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:
Ք. Աստուած, յօգնել ինձ նայեաց,
Ս. Եւ Տէ'ր, յընկերել ինձ փութա՛:
Ք. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
Ս. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. Ամէն:

Աւելուիա՛:

Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ,
յաղագոս¹ ամենայնի, Տէ'ր, փառք
Քեզ:

Ք. Զիմ ըզպաղեալ² սիրտս առ բարին,
Ս. Զեռն³ սիրովդ Աստուածային:

¹ Համար: — ² Պաղատ: — ³ Տաքցուր:

ՀԱՐԱԿԱՆ

Են որ ասեն Բան 'ստ Յովհաննու,
 Եւ յանուանէ¹ փախչին յորդւոյ.
 Ոչ գիտելով յիմար հոգւով
 Թէ չէ օտար Բանն² ի յորդւոյ:

Ձե որպէս ծնունդ է բան սրբաի,
 Նոյնպէս եւ Հօր ծնունդ որդի.
 Լոյս ի լուսոյ յառաջընդուն,
 Եւ ոչ նըման ծննդեան մերում:

Բան ասացաւ անուն նորին,
 Ձե անմարմին է ծնունդ Բանին.
 Եւ զի նըմին Հօր է բնութիւն,
 Անուանեցաւ յորդիութիւն:

Անհա մարդկան եւ հրեշտակաց,
 Բանի անճառ³, անտես⁴ մըտաց.
 Միայն հաւատ ուղղափառաց
 Էրրորդութեանն է մերձակաց:

¹ Անունէն: — ² Յիսուս Քրիստոս: — ³ Ան-
 ճառելի: — ⁴ Անտեսանելի:

Ձե է անկէտ¹ եւ անսահման,
 Աներբ², անուր³ եւ անվախճան.
 Է՛ր միշտ, եւ է յայժմեւ⁴,
 Եւ էսոցի⁵ յանբաւ դարուց:

Հօր ծոցածին որդիդ եւ Բան,
 Աղբիւր սիրոյ Աստուած մարդեան,
 Ի քո սրբաին ջրոյն եւ արեան
 Ծով ծաւալի ծիծաղական:

Առ դրունս⁶ լուսոյ Առաւօտիդ
 Կանխեմ հոգւով գիշերային.
 Տուր ինձ ակն ունել⁷ առաւօտին
 Ձե յագեցայց տեսեամբ քոյին:

Ձեա որ քաղցեալս եմ⁸ քո հացին
 Աստուածայնոյդ երկնաւորին.
 Արժանացո՛ւ կենաց հացին
 Յերկնից իջեալ⁹ եւ անմահին:

Տալով զօժման դարձեալ զհոգին
 Եւ ըզրաժակ նորոյ Ուխտին
 Բարձրացուցեալ զեւ վերըստին
 Առ քեզ հանցես յերկրէ յերկին,
 Ամէն:

¹ Յաւիտենական: — ² Անժամանակ: — ³ Որ
 տեղ մը չի պարունակուիր: — ⁴ Հիմա, ներ-
 կայիս: — ⁵ Պիտի ըլլայ: — ⁶ Դրան առջեւ: —
⁷ Սպասել: — ⁸ Ես օր անօթեցած եմ: —
⁹ Երկինքէն իջած:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Առաւօտ լուսոյ. Արեգակն արդար. Առ-
իս լոյս ծագեալ: — Բղխումն ի Հօրէ.
Բղխեա ի հոգւոյս¹. Բան քեզ ի հաճոյս².
Ծընունդ Հօր ծոցոյ. Ծածկելոյս ստու-
երաւ. Ծագեալ լոյս փառայ: — Զար-
թիր³, Տէր, յօգնել. Զարթո՞ւ⁴ ըզթըմ-
րեալս. Զուարթնոց⁵ նըմանել:

Սղմ. Պատրաստ է սիրտ իմ. Աստուած
սրտի իմոյ, զի արարից⁶ զկամս քո:
Աստուած իմ կամեցայ, եւ զօրէնս
քո ի մէջ սրտի իմոյ:

Մ Ա Ղ Օ Թ Ք

Հուր կենդանի Բրիստոս, զհուր սիրոյ
քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեալ յանձն
իմ, զի այրեացէ զախտ հոգւոյ իմոյ, եւ
սրբեացէ զխիղճ մտաց իմոց, եւ մաքրեացէ
զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեացէ զլոյս գի-
տութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեալ
քո արարածոց եւ ինձ բազմամեղին. Ամէն:

Բրիստոս, կենդանի հուր. բորբոքէ իմ ան-
ծիս մէջ քու սիրոյդ հուրը զոր երկրի վրայ
ծգեցիր. որպէս զի իմ հոգւոյս ախտը այրէ,
իմ մտացս խղճի խայթը ջնջէ. իմ մարմնոյս
մեղքերը մաքրէ, իմ սրտիս մէջ վառէ քու գի-
տութեանդ լոյսը. եւ ողորմէ քու արարած-
ներուդ ու ինձ շատ մեղաւորին. Ամէն:

¹ Հոգւոյս մէջ: ² Բեզ հաճելի. ³ Արթնցիր:
⁴ Արթնցոր: ⁵ Հրեշտակներու: ⁶ Ընեմ:

Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն

Ի ԴԵՄՍ ՄԱՐԴԱՏԵԼՈՅՆ ԱՍՏՈՒԺՈՅ

Օրհնեալ Տէր մեր Յիստուգրիստոս. Ամէն:

- Ք. Աստուած, յօգնել ինձ նայեաց,
- Ս. Եւ Տէր, յընկերել ինձ փութալ:
- Ք. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
- Ս. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. Ամէն:

Ալէլուիա:

Փառք քեզ, Աստուած, փառք քեզ,
յաղագս ամենայնի, Տէր, փառք
քեզ:

- Ք. Զիմ ըղպաղեալ սիրտս առ բարին,
- Ս. Զեռս սիրովդ Աստուածային:

ՀԱՐԱԿԱՆ

Ծածկեալն ի ծոց Հօր իսկակից,
Հօր իւր սահման անշարժական,
Լոյս ի լուսոյ անմարմնական,
Պատկեր Հօր ոչ փոփոխական:

Սկիզբն սկզբան արարչական,
Աղբիւր կենացն անմահութեան,
Ի կերպարանն յիւր ստեղծեալ
Գայ կամաւ Հօր անդ խոնարհեալ:

Էջ աւետօքնն հրեշտակին
Բնակիլ յարդանդ Սըրբոյ կուսին.
Նախ ի Հոգւոյն մաքրեալ ոգին,
Հօր զօրութեան օթարանին:

Բանն անմարմին ըստ էութեան՝
Եղեւ մարմին ճրշմարտութեամբ.
Զիւրն պահեալ անյեղապէս¹,
Եւ զիմն առեալ ըստուգապէս:

¹ Առանց այլայլութեան:

Մարգըրտօրէն ծընունդ կուսին
Աստուած եւ մարդ մի՝ երկօքին¹,
Տնւր ինձ սիրոյդ Աստուածային
Լինել խընդրող խանդակաթին:

Զիս որ յախտէ ծընեալ մարմին
Եւ ի հողոյ զանգեալ² արիւն,
Զոր մաքրեցեր ցօղով կողին
Եւ ես դարձայ ի նոյն կրրկին:

Մի թողուցուս կալ ի նըմին,
Այլ լուսացես զիս վերըստին.
Թէ ոչ պարգեւքն շնորհեսցին,
Այլ արտասուօք առողեսցին:

Բաց ըղբերան իմ վըտակին
Քո սուրբ արեան կողահասին,
Որպէս տըղայ ստընդիացին՝
Որ զմօրն յինքեան ձգէ ըզստին:

Զե ես արբից³ զուրախութիւն
Եւ զմայլեցայց ի Սուրբ Հոգին,
Եւ քաղցրացին համ բաժակին
Սէր անարատ անապակին. Ամէն:

¹ Մի անձ եւ երկու բնութիւն, այսինքն
Աստուածային ու մարդկային: — ² Բաղա-
դրեալ, շաղուեալ: — ³ Խմբ:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Գանձդ ողորմութեան. Գանձիդ ծածկելոյ. Գըտող զեա արա՜: — Դուռն ողորմութեան, Դաւանողեա բաց. Դասեցո՛վերնոցն՝: — Միածինդ Հօր. Մոյժ՝ զեա յառաջատ. Մաքուր հարսանեացդ:

Սղմ. Պատրաստ է սիրտ իմ. Աստուած սրտի իմոյ, զե արարից զկամսքո՛ւ. Աստուած իմ կամեցայ, եւ զօրէնսքո՛ւ ի մէջ սրտի իմոյ:

Ա Ղ Օ Թ Ք

Հուր կենդանի ֆրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն իմ, զե այրեացէ զախտ հոգւոյ իմոյ, եւ սրբեացէ զեկղձ մտաց իմոց, եւ մաքրեացէ զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեացէ զոյս գիտութեան քո ի սրտի իմոմ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղեա. Ամէն:

¹ Գանեւ տուր: — ² Վերիններուն. Հրեշտակաց եւ արքայ հետ: — ³ Մացուր:

Ա Ր Ե Ի Ա Գ Ա Լ Ի Ն

Ի ԴԵՄ ՔԱՌԻՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Օրհնեալ Տէր մեր Յիստուֆրիստոս. Ամէն:

Ք. Աստուած, յօգնել ինձ նայեաց,
Ս. եւ Տէր, յընկերել ինձ փութա՛:
Ք. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
Ս. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Աւելուիա՛:

Փառք քեզ, Աստուած, փառք քեզ,
յաղագո՛ւ ամենայնի, Տէր, փառք քեզ:

Ք. Զեմ ըզպաղեալ սիրտս առ բարին
Ս. Զեռն սիրովդ Աստուածային:

ՀԱՐԱԿԱՆ

Այսօր անճառ լուսոյն ծագումն
ի փրկութեան մեր կատարումն
Խոնարհի ի վերնատունն
ի ստուերական տօնից լըրումն:

Ելից¹ զօրէնսն Մովսիսի
Ձոր խօսեցաւ ի Սինայի.
Եկեր² ըզգառն օրինակին
Եւ ըզբաղարջն ընդ եղեգին:

Ըզհինն ի նորրս փոխելով
Ձբստուերն ի լոյս ճըշմարտելով.
Փոխան³ գառինն ինքըն գոլով
Գառն Աստուծոյ նըւիրելով:

Ընդ բաղարջին հաց անխըմնր,
Ետ⁴ ըզմարմինն իւր զերկնաւոր,
Ըզկուսածինն անսերմնաւոր
Ձանապականն եւ զհոգեւոր:

¹ Կատարեց: — ² Կերաւ: — ³ Տեղ, փո-
խանակ: — ⁴ Տուաւ:

Ընդ ոչխարին արեան ուխտին
Ետ մեզ զարիւն իւր ուխտ կըրկին.
Եւ եղեգան դառնագունին
Փոխան ըզվարս Աստուածային:

Թագաւորն արարածոց
Ձհացըն կենաց ետ քաղցելոց,
Եւ ըզբաժալն ուրախարար
Որք յԱդամայ տրտմեցելոց:

Այս նոր ուխտ է իմոյ արեան
Փոխան հընոյ ուխտին արեանց.
Ձոր յիշատակ իմ առնիցէք
Մինչեւ եկից¹ ես միւսանդամ:

Ժողովեալքս ի քէն հայցեմք²
Ընդ ժողովեալ մետառանին,
Որ զինարարըդ քո մարմին
Բաշխեալ ետուր³ ընդ բաժակին:

Հնորհեա՛ եւ մեզ, Տէր, ընդ նոսին
Հաղորդ լինել քում սեղանին.
Կենաց հացիդ⁴ յոր փափաքիմք
Եւ ըմպելոյդ⁵ ում⁶ ծարաւիմք. Ամէն:

¹ Մինչեւ որ գամ: — ² Կը խնդրենք: —
³ Տուիր: — ⁴ Ամենատուր Հաղորդութեան:
— ⁵ Յիսուսի անդին արեան: — ⁶ Որու:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Ժողովող բարեաց. Ժողովեա՛ եւ զեւ.
Ժողովս անդրանկաց¹: — Լէ՛ր կեանք
մեռելոյս. Լոյս խաւարելոյս. Լուծանող
ցաւոյս: — Կենարար Փրկիչ. Կեցո՛ ըզմե-
ռեալս. Կանգնեա՛ ըզգլորեալս:

Սղմ. Պատրաստ է սիրտ իմ. Աստուած
սրտի իմոյ, զի արարից զկամս քո:
Աստուած իմ կամեցայ, եւ զօրէնս
քո ի մէջ սրտի իմոյ:

Ա Ղ Օ Թ Ք

Հուր կենդանի Քրիստոս, զՀուր սիրոյ
քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն
իմ, զի սյրեսցէ զախտ Հոգւոյ իմոյ, եւ
սրբեսցէ զեկիզ՝ մտաց իմոյ, եւ մաքրեսցէ
զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զլոյս գի-
տութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեա՛
քո արարածոց եւ ինձ բազմամեղիս. Ամէն:

¹ Ընտրեալներուն:

Ե Ր Ր Ո Ր Գ Ժ Ա Մ Ո Ւ Ն

Ի Դ Է Մ Ս Յ Ի Ս Ո Ւ Ս Փ Ր Կ Չ Ի Ն

Որոհեալ Տէր մեր Յիստոս Քրիստոս. Ամէն:

Ք. Աստուած, յօգնել ինձ նայեաց,
Ս. եւ Տէր, յընկերել ինձ փութա՛:
Ք. Փառք Հօր եւ որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ.
Ս. Այժմ եւ միշտ եւ յա՛իտեանս յա՛ի-
տենից Ամէն:

Աւելուիա՛:

Փառք քեզ, Աստուած, փառք քեզ,
յաղազս ամենայնի, Տէր, փառք
քեզ:

Ք. Զիմ ըզպաղեալ սիրտս առ բարին
Ս. Զեռո՛ սիրովդ Աստուածային:

ՀԱՐԱԿԱՆ

Լոյսըն խօսէր աղերսալի
 Խաւարելոյն վասըն՝¹ դարձի,
 Մի ոմն ի ձէնջ ասէ եղբարք
 Ձեռ մատնելոյ է առ ի մահ՝²։

Չայնիւ մաղթէր աղօթական
 Վասն իմ առ Հայր իւր էական.
 Ծուռըր դընէր խոնարհական
 Որում կըրկնի ծուռըր ամենայն։

Սոսկալին Բերովբէից
 Բառնայր³ ինքեամբ ըզփայտ խաչին
 Մինչ ի տեղի Գողգոթային՝
 Յորում հգեալ մարդն առաջին։

Ըզձեռան եւ զոտսըն ծակեցին
 Ըստ յայտնապէս Գալթեան ձայնին.
 Ընդ փայտ խաչին բեւեռեցին⁴
 Ձմատունն որ գրեաց ի տախտակին։

¹ Համար։ — ² Մահուան։ — ³ Կը վեր-
 ցնէր, կը կրէր։ — ⁴ Գամեցին։

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց
 Ոտք ընդ ոտից ընթանալեաց.
 Փայտ ընդ փայտի դառըն պրտողոյ
 Կեանք ընդ մահու փոխարկելով։

Ի մէջ երկուց անօրինաց
 Կայր¹ մերկացեալ Տուողն օրինաց.
 Չոր ոչ տեսին աղքէն կուրաց
 Բայց ի միոյն յաւաղակաց։

Յօղէր² արտօսըր ցաւագին
 Մայր Տեռան որ կայր մերձ³ առ խաչին.
 Յորժամ լըսէր ըզծարաւին
 Բարբառելոյ իւր Միածնին։

Ետուն քացախ խառնեալ լեղի⁴
 Այնմ որ բըղխեաց⁵ գետ յԱգենի.
 Եւ ի վիմէն վըտակ բարի
 Արբոյց⁶ տոհմին⁷ դառնացողի⁸։

Կըրկնավըտակ կողին աղբերք
 Եկեղեցի իւր հաստատի.
 Ձրովըն մաքրի, զարիւնն ըմպէ՝
 ՁՈրդի ընդ Հօր փառաւորէ։ Ամէն։

¹ Կը կենար։ — ² Կը թափէր։ — ³ Մօտը։
 — ⁴ Լեղի, քիւսէր։ — ⁵ Բխեցուց։ —
⁶ Խմցուց։ — ⁷ Յեղ, աղբ։ — ⁸ Աստուծոյ
 դէմ գանդատող։

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Փրկիչ բոլորից. փութա՛ զիս փրկել.
Փորձութեանց մեղաց: — Ընկա՛ւ¹ զիս
գլխով. Ընկա՛ւ ողորմած. Ընկա՛ւ մարդա-
սէր: — Թագաւոր փառաց. Թողու-
թեանց տըւող. Թող ինձ ըզյանցանս:

Սղմ. Պատրաստ է սիրտ իմ. Աստուած
սրտի իմոյ, զի արարից զկամս քո:
Աստուած իմ կամեցայ, եւ զօրէնս
քո ի մէջ սրտի իմոյ:

Ա Ղ Օ Թ Ք

Հուր կենդանի Բրիստոս, զհուր սիրոյ
քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն
իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, եւ
սրբեսցէ զեկղձ մտաց իմոյ, եւ մաքրեսցէ
զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զլոյս գի-
տութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեա՛
քո արարածոց եւ ինձ բազմամեղիս. Ամէն:

¹ Ընդունէ:

Վ Ե Յ Ե Ր Ո Ր Գ Ժ Ա Մ Ո Ւ Ն

Ի Դ Է Մ Ս Ս Է Ր Ա Ն Ո Ւ Ն Յ Ի Ս Ո Ւ Ս Ի

Սրբենալ Տէր մեր Բրիստոս Բրիստոս. Ամէն:

Ք. Աստուած, յօգնել ինձ նայեաց,
Ս. Եւ Տէր, յընկերել ինձ փութա՛:
Ք. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
Ս. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. Ամէն:

Աւելուիա:

Փառք քեզ, Աստուած, փառք քեզ,
յաղագս ամենայնի, Տէր, փառք
քեզ:

Ք. Զիմ ըզպաղեալ սիրտս առ բարին
Ս. Զեռո՛ սիրովդ Աստուածային:

ՇԱՐԱԿԱՆ

Ի միջօրեայն նրսեմացաւ¹.
 Յորժամ Ադամ մեղօք մեռաւ.
 Ի յիններորդն ի լոյս դարձաւ,
 Յորում մահուամբ մահն լուծաւ:

Անմահ բնութիւնն Աստուածային
 Մեռաւ բնութեամբ մահկանացուն.
 Եւ մահացուն խառնեալ ի նմին
 Եղեւ² անմահ ընդ անմահին:

Ոչ ոմն անմահ ոմն մեռեալ,
 Զի այս երկուք են բաժանեալ.
 Այլ որ անմահ՝ նոյն եւ մեռեալ.
 Եւ որ մեռեալ՝ նոյն եւ մնայեալ:

Եւ զի Աստուած էր որ մեռաւ,
 Յայտնեն զարմանքն որ գործեցան.
 Երկիր հիմամբք սասանեցաւ,
 Եւ վարագոյր ընդ մէջ հերձաւ³...:

¹ Միջնցաւ: — ² Եղաւ: — ³ Մէջտեղէն
 պատուեցաւ:

Եւ զի մեռեալն էր կենդանի,
 Թէպէտ եւ մահն էր հաւատարի¹,
 Յայտնէ կողին խոցուած տիգի,
 Կայլակ աղբերցըն կըրկնակի:

Զուրն ի լուանալ մեղուցելոյ
 Ի մահ նորա մըկըրտելոյ,
 Արիւնն ի սնունդ մաքուր հոգւոյ
 Առ ի Բրիստոս տղայացելոյ:

Կողին խոցմամբն, որ պատառեաց,
 Ըղկողածնին² մեղըս ջնջեաց.
 Զեկեղեցի այնու շինեաց.
 Եւ ընդ գրախտին³ մեղ պարգեւեաց:

Սիրտ իմ առ քեզ աղաղակե
 Բանդ⁴, որ ընդ Հօր ի սկըղբանէ.
 Որ կամաւոր վառն մարդկան
 Կրեցեր մարմնով զայս ամենայն:

Ինձ լըսելի արա՛ւ⁵ ըզձայն
 Յարքայութեանդ քո կոչման.
 Ընդ ժողովոցն անդ անգրանկացն
 Օրհնել ըզքեզ միշտ յաւիտեան. Ամէն:

¹ Ստոյգ: — ² Եւային: — ³ Դրախտին
 տեղ: — ⁴ Բանդ. Աստուած: — ⁵ Լսեցուր:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Ի քէն, Տէր, հայցեմ. Ի մարդասիրէդ.
Ինձ բըժըշկութիւն: — Յօղ արեան քո
Տէր. Յօղեա՛ ի հոգիս. Յընծասցէ անձն
իմ: — Հաստեա՛ հաւատով. Հաստատեա՛
յուսով. Հիմնեցո՛ սիրով:

Սղմ. Պատրաստ է սիրտ իմ. Աստուած
սրտի իմոյ, զի արարից զկամս քո:
Աստուած իմ կամեցայ, եւ զօրէնս
քո ի մէջ սրտի իմոյ:

Ա Ղ Օ Թ Ք

Հուր կենդանի Բրիստոս, զհուր սիրոյ
քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն
իմ, զի այրեացէ զախտ հագւոյ իմոյ, եւ
սրբեացէ զխիղճ մտաց իմոց, եւ մաքրեացէ
զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեացէ զլոյս գի-
տութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեա՛
քո արարածոց եւ ինձ բազմամեղիս. Ամէն:

Ի ՆՆԵՐՈՐԴԻ ԺԱՄՈՒՆ

Ի ԴԷՄՍ ՍՐՏԻՆ ՅԻՍՈՒՍԻ Ի ԽՈՐ
ԽՈՅՆԼՈՅՆ ՏԻԳԼԻ

Օրհնեալ Տէր մեր Յիստոս Բրիստոս. Ամէն:

Ք. Աստուած, յօգնել ինձ նայեալց,
Ս. եւ Տէր, յընկերել ինձ փութա՛:
Ք. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
Ս. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. Ամէն:

Ալէլուիա:

Փառք քեզ, Աստուած, փառք քեզ,
յաղագս ամենայնի, Տէր, փառք
քեզ:

Ք. Զիմ բղպաղեալ սիրտս առ բարին
Ս. Զեռո՛ սիրովդ Աստուածային:

ՀԱՐԱԿԱՆ

Որ բարձրացար ի սուրբ խաչին,
Բարձեր¹ զյանցանքս մարդկային,
Եւ ըզբնութեանքս թըշնամին
Բեւեռեցեր² դու ի նըմին³:

Ձիս ամրացո՛ւ ընդ հովանեաւ⁴
Ամենայաղթ քո նըշանին.
Եւ ի ծագելն⁵ յարեւելից
Լուսաւորեա՛ւ լուսով նորին:

Որ աշակողմ՝ աւազակին
Բացեր⁶ ըզդուռն Ադին դրախտին,
Յիշեա՛ւ եւ զիս յորժամ գայցես⁷
Արքայութեամբ քո հայրենին:

Լըւայց⁸ եւ ես ըզցընծալին
Ձքո ասացեալ պատասխանին՝
Այսօր ընդ իս իցես յԱդին
Ի հայրենիս քո առաջին:

¹ Վերցուցեր, ջնջեցեր: — ² Գամեցեր: —
³ Անոր վրայ: — ⁴ Հովանին տակ: — ⁵ Փայ-
լած, երեւցած առն: — ⁶ Բացեր: — ⁷ Գաս:
— ⁸ Պիտի լսեմ:

Որ փոխանակ բանականին¹
Անբան տարերքըն սարսէին.
Արդ ընդ վիմացն², որ շարժէին
Հարժեա՛ զանշարժ սիրտս ի բարին:

Ընդ պատառեւ վարագուերին
Վասըն պարտեացն³ Ադամային՝
Ձիմ՝ պատառեա՛ զհնութիւն չարին,
Ձընջեա՛ ըզգիր մեղացս անձին:

Որ յետ լընլոյ⁴ գրեւոյ բանին,
Աւանդելոյ առ Հայր զհոգին,
Տիգով հարեալ զինաւորին՝
Աղբիւր բըղխեաց ի սուրբ կողին:

Հնորհեա՛ եւ ինձ կենաց աղբիւր
Ըզհոգեւոր սուրբ ըմբէլին.
Գետահետեալ⁵ յորովայնէ
Ձառատաբուղիս շնորհաց Հոգին:

Որ ի մահու⁶ քո անմահիդ,
Ձոր ընկալար⁷ մահ ի մարմին,
Յանմահութիւն զիս փոխեցեր,
Ձմահու հատեր ջիւլս վերջին⁸. Ամէն:

¹ Բանական արարածներուն: — ² Բարե-
րուն հետ: — ³ Պարտքերուն, մեղքերուն: —
⁴ Կատարուելէն յետոյ: — ⁵ Գետերու պէս
վազած: — ⁶ Մահուամբ: — ⁷ Ընդունեցար:
— ⁸ Մահուան վերջին ջիւղերը կտրեցիր:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Նորոգող հնութեանց. Նորոգեա՛ եւ զեա. Նորոգ զարդարեա՛: — Պարգեւիչ բարեաց. Պարգեւեա՛ իմոց. Պարտեացս թողութիւն: — Ճառագայթ փառաց. Ճանապարհ ինձ ցոյց¹. Ճեպեւ ի յերկինս:

Սղմ. Պատրաստ է սիրտ իմ. Աստուած սրտի իմոյ, զի արարից զկամս քո: Աստուած իմ կամեցայ, եւ զօրէնս քո ի մէջ սրտի իմոյ:

Ա Ղ Օ Թ Ք

Հուր կենդանի Բրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, եւ սրբեսցէ զկիզձ մտաց իմոց, եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս. Ամէն:

¹ Ցցուր:

Ե Ր Ե Կ Ո Ց Ե Ա Ն Ժ Ա Մ ՈՒ Ն

Ի ԴԵՄՍ ՄԱՐԴԱՍԷՐ ՄԻՋՆՈՐԴԻՆ

Օրհնեալ Տէր մեր Յիսոսս Բրիստոս. Ամէն:

Ք. Աստուած, յօգնեւ ինձ նայեաց,
Ս. եւ Տէր, յընկերեւ ինձ փութա՛:
Ք. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
Ս. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Աւելուիա՛:

Փառք քեզ, Աստուած, փառք քեզ,
յաղագոս ամենայնի, Տէր, փառք քեզ:

Ք. Զեմ՝ ըզպաղեալ սիրտս առ բարին
Ս. Զեռո՛ սիրովդ Աստուածային:

ՀԱՐԱԿԱՆ

Աստուած անեղ անհասական,
Հայր գըթութեանց, ինձ ողորմեա՛ւ:
Բանդ ի Հօրէ անձառ ծընունդ,
Որ մարմնացար, ի յիս¹ գըթա՛ւ:

Գովեալ Հոգիդ Սուրբ Աստուծոյ,
Որ նորոգողդ ես, ողորմեա՛ւ:
Դաւանողիս Աստուածութեանդ,
Երրորդութիւն սուրբ, յիս գըթա՛ւ:

Երկնաւորաց եւ անմահից
Բանիւ² ստեղծող, ինձ ողորմեա՛ւ:
Երանուհւոյ Աստուածածնին
Սուրբ ծընընդեամբն ինձ ողորմեա՛ւ:

Իւրաքանչիւր քոց սիրողաց
Մաքուր հայցմամբն ինձ ողորմեա՛ւ:
Ծարաւելոցն յաղբիւր սիրոյդ
Արբո՞ճ եւ զիս, եւ յիս գըթա՛ւ:

¹ ինձ: — ² խօսքով: — ³ խմբով:

Կենարարիդ Հարչարանօքն
Որ յաղաղս իմ, ինձ ողորմեա՛ւ:
Ճըշմարտապէս խաչելութեամբդ,
Անպարտականդ, ինձ ողորմեա՛ւ:

Մածմամբ¹ մարմնոյդ ի փայտ խաչին
Սուրբ բեւեռօքն², ի յիս գըթա՛ւ:
Յանպարտական³ կողէդ հոսման
Արեամբ եւ ջրովն զիս լուա՛ւ:

Պսակաւ փրշոցն ըզփուշ մեղաց
Բարձեր ի մէնջ⁴, եւ յիս գըթա՛ւ:
Չամբեալ⁵ վասն իմ ի ծարաւ ին
Ձգաւորն⁶ լեզին⁷, ինձ ողորմեա՛ւ:

Ռեաին⁸ քաղցու մեղ արբույցեր⁹
Մարմնով ու արեամբրդ, յիս գըթա՛ւ:
Փրկիչ, յորժամ գայցես փառօք,
Չիս նորոգեա՛ւ եւ ողորմեա՛ւ:

Քեզ գօհուծիւն երգեմք ընդ Հօր¹⁰
Եւ ընդ Հօգււյդ¹¹ այժմ¹² յաբակայ¹³
Յիսուս, հեզ ե խոնարհ սրբաիւ,
Արա՛ զսիրտ իմ ըստ սըրտին քում: Ամէն:

¹ Փակչելով: — ² Գամբով: — ³ Անմեղ:
— ⁴ Մեղմէ: — ⁵ խմբով: — ⁶ Լեզին, կծու:
— ⁷ Լեզին, բճ. եօր: — ⁸ խեժ. (Երբ կարգ
մը տունկերու կեղեւը ճեղքուի անկէ բխած
հիւթը): — ⁹ խմբուցիր: — ¹⁰ Հօր Աստուծոյ
հետ: — ¹¹ Հօգւոյն սրբոյ հետ: — ¹² Հիմա:
— ¹³ Միշտ, մշտնջենաւորապէս:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Չայնիւս աղաչեմ. Չեռօքս պաղատիմ.
Չիր¹ բարեաց չնորհեաւ: — Ուրախացո՛
Տէր. Ողբոյս փրկութեամբ. Ոյր վասն եմ
ի սուգ²: — Շնորհատու բարեաց. Շնոր-
հեա՛ Ղքաւութիւն. Շնորհեա՛ Ղթողու-
թիւն:

Սղմ. Պատրաստ է սիրտ իմ. Աստուած
սրտի իմոյ, զի արարից զկամս քո:
Աստուած իմ կամեցայ, եւ զօրէնս
քո ի մէջ սրտի իմոյ:

Ա Ղ Օ Թ Ք

Հուր կենդանի Բրիստոս, զՀուր սիրոյ
քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն
իմ, զի այրեսցէ զախտ Հոգւոյ իմոյ, եւ
սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, եւ մաքրեսցէ
զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զոյս գի-
տութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեա՛
քո արարածոց եւ ինձ բազմամեղիս. Ամէն:

¹ Պարգեւ: — ² Որուն համար սու գի մէջ եմ:

Հ Ա Ն Գ Ս Տ Ե Ա Ն Ժ Ա Մ Ո Ւ Ն

Ի ԴԵՄՍ ՍՐՏԻՆ ՅԻՍՈՒՍԻ ԲԵՐԿՐՈՒ-
ԹԵԱՆՆ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՅ

Օրհնեալ Տէր մեր Բիստոս Բրիստոս. Ամէն:

Ք. Աստուած, յօղնել ինձ նայեաց,
Ս. Եւ Տէր, յընկերել ինձ փութա՛:
Ք. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
Ս. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. Ամէն:

Աւելուիա:

Փառք քեզ, Աստուած, փառք քեզ
յաղաղս ամենայնի, Տէր, փառք
քեզ:

Ք. Զիմ ըզպաղեալ սիրտս առ բարին
Ս. Զեռո՛ սիրովք Աստուածային:

ՀԱՐԱԿԱՆ

Որ յարութեան երեկոյին
Միաշաբթ կիրակէին,
Երեւեցար մետասանին
Փակեալ դըրամբք ի գիշերին:

Զիս որ զհօգւոյս փակեալ ունիմ
Զդրունքս մըտաց քոյոյ բանին.
Մի թողուցուս յանլոյս¹ յարկիս,
Մի օթակից լինել² չարին:

Լըցեր զըզնումն³ աշակերտին
Թերահաւատքն թովմային.
Շօշափելով զեացուած կողին
Եւ զբեւեռացըն սուրբ տեղին:

Որով առաք մէք զերանին,
Որք ոչ տեսաք որպէս նոքին:
Զիս, որ հօգւով հաւատացեալ
Տէր եւ Աստուած խոստովանիմ,

¹ Լուսէ գուրկի: — ² Զարին հետ միասին
չապրիլ: — ³ Փափաքը կատարեցիր:

Արժանացոյ յորն վերջին,
Յորժամ գայցես փառօք քոյին,
Զքեզ տեսանել մարմնով նովին¹,
Ողջագուրել սիրով սրտին:

Որ ի լըման քառասնեկին
Յետ յարութեան սուրբ պատեքին,
Ի Զիթենեաց հաներ լերին
Զընտրեալ զգաս մետասանին:

Եւ զաւետիս Հօր ըզՀոգին
Խոստանայիր շնորհել նոցին.
Եւ օրհնելով, Տէր, ըզնոսին
Վերհամարձար փառօք յերկին:

Եւ ըզնութիւնըս մարդկային²,
Զոր չարն արար անդընդային³,
Բարձրացուցեր գեր ի վերոյ
Քան ըզնութիւնըն հրեղինին³:

Երկրպագեալ յանմարմնական
Զօրացն ընդ Հօր եւ ընդ Հոգին⁴.
Եւ զիս, զանշարժս առ ի բարին,
Վերաբերեալ ընդ քեզ յերկին. Ամէն:

¹ Նոյն մարմնով: — ² Սատանան դժոխքի
արժանի բնաւ: — ³ Հրեշտակաց: — ⁴ Գուռն որ
Հօր Աստուծոյ եւ Հոգւոյն Սրբոյ հետ հրեշ-
տակաց կողմանէ երկրպագութիւն կ'ընդունին:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Սէր անուն Յիսուս. Սիրով քո ճմբեւ.
Սիրա իմ քարեղէն: — Տենչալուդդ տես-
լեամք. Տնւր ինձ յագենալ. Տէր Յիսուս
Քրիստոս: — Քաւիչ յանցանաց: —
Քաւեա՛ զորհնաբանս: — Քեզ երգել
ըզվառս: — Աստուածածնին բարեխօսու-
թեամք. Յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛:

Սղմ. Պատրաստ է սիրտ իմ. Աստուած
սրտի իմոյ, զի արաբից զկամս քո:
Աստուած իմ կամեցայ, եւ զօրէնս
քո ի մէջ սրտի իմոյ:

Ա Ղ Օ Թ Ք

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ
քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն
իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, եւ
սրբեսցէ զերկոյճ մտաց իմոյ, եւ մաքրեսցէ
զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զլոյս գի-
տութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեա՛
քո արարածոց եւ ինձ բազմամեղիս. Ամէն:

Ո՛վ Ամենասուրբ Սիրտ Յիսուսի. ողոր-
մեա՛ մեզ.

Ո՛վ Անարատ յղացեալ Սիրտ Մարիա-
մու. Աղօթեա՛ վասն մեր. Ամէն:

ԵՐԳ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Առաւօտ լուսոյ. Արեգակն արդար. Առ-
իս լոյս ծագեա՛:

Բղխումն ի Հօրէ. Բղխեա ի հոգւոյս. Բան
քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան. Գանձիդ ծածկե-
լոյ. Գրտող զիս արա՛:

Դուռն ողորմութեան. Դաւանողիս բաց.
Դասեցո վերնոցն:

Երբեակ միութիւն. Եղելոց¹ խնամող. Եւ
ինձ ողորմեա՛:

Զարթիր Տէր, յօգնել. Զարթա՛ ըզթըմ-
րեալս. Զուարթնոց² նմանել:

Էդ Հայր անսկիզբն. Էակից Որդի. Է միշտ
Սուրբ Հօգի:

Ընկալ զիս զրթած. Ընկալ ողորմած. Ըն-
կալ մարդասէր:

¹ Արարածոց: — ² Հրեշտակաց:

Թագաւոր փառաց. Թողութեանց տուող.
Թող ինձ բղանցանս:
Ժողովող բարեաց. Ժողովեա եւ զիս. Ժո-
ղովս անդրանկաց¹:
Ի քէն Տէր հայցեմ. Ի մարդասիրէդ. Ինձ
բժժըշկութիւն:
Լեր կեանք մեռելոյս. Լոյս խաւարելոյս.
Լուծանող² ցաւոյս:
Խորհրդոց դիտող. Խաւարիս շնորհեա.
Խորհուրդ լուսաւոր:
Ծընունդ Հօր ծոցոյ. Ծածկելոյս բստու-
երաւ. Ծագեա լոյս փառաց:
Կենարար փրկիչ. Կեցող ըզմեռեալս. Կան-
գնեա ըզգլորեալս:
Հաստեա հաւատով. Հաստատեա յուսով.
Հիմնեցս սիրով:
Չայնիս աղաչեմ. Չեռօքս պաղատիմ.
Չիր³ բարեաց շնորհեա:
Ղամբարամբ⁴ լուսոյ. Ղեկավար ճարտար.
Ղօղեալս⁵ ամրացս:
Ճառագայթ փառաց. Ճանապարհ ինձ
ցոյց. Ճեպել⁶ ի յերկինս:
Միածինդ Հօր. Մոյծ⁷ զիս յառագաւտ.
Մաքուր հարանեայդ:

¹ Արդարոց. — ² Բախող. փարատող: —
³ Պարգեւ: — ⁴ Լապտեր. կանթեղ: — ⁵ Պա-
հուած: — ⁶ Գիմել: — ⁷ Մաքուր:

Յորժամ գաս փառօք. Յահագին աւուրն¹.
Յիշեա զիս Բրիստոս:
Նորոգող հնութեանց. Նորոգեա եւ զիս.
Նորոգ² զարդարեա:
Շնորհատու բարեաց. Շնորհեա զքաւու-
թիւն. Շնորհեա զլիծողութիւն:
Ուրախացո Տէր. Ոգւոյս փրկութեամբ.
Ոյր վասն եմ ի սուգ³:
Չար մըշակողին⁴. Չար սերմանց նորին.
Չորացո ըզպտուղն:
Պարգեւիչ բարեաց. Պարգեւեա իմոց.
Պարաեացս թողութիւն:
Ջուր շնորհեա աչացս. Ջերմ հեղու⁵
արտօսը. Ջնջել բղանցանս:
Ռետինդ⁶ քաղցու. Ռամ⁷ հոգւոյս արբո.
Ռահ⁸ ցոյց ինձ լուսոյ:
Սէր անուն Յիսուս. Սիրով քով ճմլեա.
Սիրտ իմ քարեղէն:
Վասն զըթութեան. Վասն ողորմու-
թեան. Վերըստին կեցո:
Տենչաւոյդ տեսեամբ. Տուր ինձ յաղե-
նալ. Տէր Յիսուս Բրիստոս:

¹ Վերջին դատաստանի օրը: — ² Վերստին.
նորէն նոր: — ³ Որու համար սուգի մէջ եմ:
— ⁴ Ստատանային: — ⁵ Թափել: — ⁶ Խէժ =
խունկ: — ⁷ Ռամիկ: — ⁸ Ճամբայ:

Բաբունդ¹ երկնաւոր. Բոտեա² դաշա-
կերտս. Բամից³ երկնայնոց:
Յօղ արեան քո Տէր. Յօղեա ի հօգիս.
Յընծասցէ անձն իմ:
Իիւծեալըս⁴ մեղօք. Իիւծեալ աղաչեմ.
Իիւռել⁵ ինձ բարիս:
Փըրկիչ բոլորից. Փութա զիս փըրկել.
Փորձութեանց մեղաց:
Քաւիչ յանցանաց. Քաւեա զօրհնաբանս.
Քեզ երգել ըզփառս:

Աստուածածնին բարեխօսութեամբ
Յիշեա, Տէր. եւ ողորմեա:



¹ Վարդապետ: — ² Միացուր: — ³ Խումբ:
— ⁴ Հալումաշ եղած: — ⁵ Ընել:

ՆՈՒԻՐՈՒՄՆ

ԱՌ

ԱՄԵՆԱՍՈՒՐԵ ՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՍԻ

«ԵՐԱՆՈՒՀԻ ՍԱՐԳԱՐԻՏ ՄԱՐԻԱՄ»

Ո՛վ Ամենասուրբ Սիրտ Յիսուսի Քրիս-
տոսի, ես (Ա. Ա.) քեզ կ'ընծայեմ եւ կը
նուիրեմ զիս, իմ անձս ու կեանքս, իմ
գործերս, վիշտերս ու տառապանքներս
այն նպատակաւ որ հոգւով մարմնով ու-
րիշ բանի չծառայեմ, բայց միայն զքեզ
փառաւորելու, սիրելու եւ օրհնելու:

Իմ անփոփոխելի կամքս է ամբողջովին
քուկդ ըլլալ, եւ ամէն ինչ կատարել քու
սիրոյդ համար, իմ բոլոր սրտովս հրա-
ժարելով այն ամէն բանէ, որ կրնայ զքեզ
վշտացնել: Զքեզ ուրեմն կ'ընտրեմ, ով
Ամենասուրբ Սիրտ, իբր իմ սիրոյս միակ
առարկան, իմ կենացս պաշտպանն, իմ
փրկութեանս հաւատախըն, իմ տկարու-
թեանս եւ անհաստատութեանս դար-

մանն, իմ բոլոր պակասութեանցս բժիշկն
եւ իմ անվրդով ապաւէնս մահուանս
ատեն:

Արդ ո՛վ Սիրտդ լի ամենայն բարու-
թեամբ, Դու զիս արդարացուր Աստուա-
ծային Հօրդ առջեւ եւ անոր արդար բար-
կութեան նեւերն ինձմէ հեռացուր:

Ո՛վ Սիրտ Թխուսի, աղբիւր սիրոյ, բո-
լորովին Քեզ կ'ապաւինիմ, վասն զի իմ
չարութեանէս եւ իմ տկարութեանէս խիստ
կը վախճամ. սակայն իմ բոլոր յոյսս կը
դնեմ քու բարութեանդ վրայ:

Ջնջէ ուրեմն իմ անձիս մէջէն ամէն ինչ,
որ Քեզ անհաճոյ կամ հակառակ կու գայ:

Քու անխառն սիրոյդ միջոցաւ, Դուն
այնչափ խոր տպաւորուէս սրտիս մէջ, որ
կարող չըլլամ զՔեզ մոռնալ եւ կամ
Քեզմէ բաժնուիլ: Ահալանք քու ամէն
բարութեամբդ տուր որ իմ անունս գրուի
ի Քեզ. վասն զի կ'ուզեմ, որ իմ բոլոր
երջանկութիւնս եւ իմ բոլոր փառքս ըլլայ
ապրիլ ու մեռնիլ իբրեւ քու ծառագ.
Ամէն:

ՆՈՒԻՐՈՒՄՆ ԱԶԳԻ ՄԱՐԴԿԱՆ

ԱՌ

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ԲՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՍԻ

«ԱԵԼՈՒ ՅԳ»

Ամենաքաղցր Թխուս, Փրկիչ աղբի
մարդկան, սիրոյ հայուածք մ'արձակէ մեր
վրայ որ խոնարհութեամբ կ'իյնանք քու
Սուրբ խորանիդ առջեւ: Մենք քու կը
եւ քու կը կ'ուզենք մնալ: Բայց որպէս զի
հաստատագոյն կապերով Քեզի հետ միա-
ցած մնալ կարենանք, ահա այսօր մեզմէ
իւրաքանչիւրը յօժար կամօք ինքզինքը
կը նուիրէ քու Ամենասուրբ Սրտիդ:

Հաւ մարդիկ երբեք չճանչցան, շա-
տերը քու պատուիրաններդ ոտնակոխ
ընելով անարգեցին եւ ուրացան զՔեզ:
Ամենուն ողորմէ, ո՛վ Թխուս ամենաբարի,
եւ զամէնքը վերադարձուր ի Սուրբ Սիր-
տդ: Եղբր, ո՛վ Տէր, եղբր թաղաւորն
ոչ միայն հաւատացելոց որ Քեզմէ երբեք

հեռացած չեն, այլ եւ անառակ որդւոց,
որ թողուցին զՔեզ: Ընորհէ որ անոնք
շուտով վերադառնան ի հայրենի Տունն,
որպէս զի չըլլայ թէ խեղճութեամբ եւ
անօթութեամբ կորսուին:

Թագաւորն եղիւր անոնց որ մօլար կար-
ծիքներով խաբուած եւ կամ անհամա-
ձայնութեամբ բաժնուած են: Վերադար-
ձուր զանոնք ի նաւահանգիստն ճշմար-
տութեան եւ ի միութիւնն հաւատոյ որ
վաղ ընդ փոյթ ըլլայ միայն «Մի հօտ
եւ մի հովիւ»:

Վերջապէս Թագաւորն եղիւր անոնց
ամենուն, որ հեթանոսաց հին տւելորդա-
պաշտութեանց մէջ ընկղմեալ են եւ մի
զլանար զանոնք խաւարէն հանել եւ ա-
ռաջնորդել ի լոյսն եւ ի Թագաւորու-
թիւնն Աստուծոյ:

Ո՛վ Տէր, Սուրբ եկեղեցւոյդ տուր հան-
դարտութիւն, փրկութիւն եւ ազատու-
թիւն: Ամէն ազգաց պարգեւէ խաղա-
ղութիւն եւ բարեկարգութիւն. եւ տուր
որ աշխարհիս մէկ ծայրէն միւս ծայրն
այս միեւնոյն ձայնը հեշուի. Գոհութիւն
Աստուածային Սրտին, որ մեզ փրկու-
թիւն շնորհեց. նմա փառք եւ պատիւ
յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՊԱՂԱՏԱՆՔ

ԱՍ

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՍԻ

Տէր, ողորմեա.

Քրիստոս, ողորմեա.

Տէր, ողորմեա.

Քրիստոս, լուր մեզ.

Քրիստոս, անսա մեզ.

Հայր երկնաւոր Աստուած,

Որդի փրկիչ աշխարհի Աստուած,

Հոգիք սուրբ Աստուած,

Սուրբ Երրորդութիւն մի Աստուած,

Սիրտ Յիսուսի, Որդւոյ Հօրն յաւիտե-
նականի,

Սիրտ Յիսուսի, կազմեալ ի Հոգւոյն

Սրբոյ յարգանդի Վուսին Մարիամու,

Սիրտ Յիսուսի, դոյացապէս միտցեալ

ընդ Բանին Աստուծոյ,

Երբ որդւոն

Սիրտ Յիսուսի, անբաւ Մեծփայեւուն
թեան,
Սիրտ Յիսուսի, Սուրբ Տաճար Աստուծոյ,
Սիրտ Յիսուսի, Տապանակ Բարձրելոյն,
Սիրտ Յիսուսի, Տուն Աստուծոյ եւ
Դուռն երկնից,
Սիրտ Յիսուսի, բորբոքեալ Հնոց սիրոյ,
Սիրտ Յիսուսի, ընդունարան արդարու-
թեան եւ սիրոյ,
Սիրտ Յիսուսի, լի բարութեամբ եւ
սիրով,
Սիրտ Յիսուսի, անդունդք ամենայն
առաքինութեանց,
Սիրտ Յիսուսի, գերարժանի ամենայն
գոհութեան,
Սիրտ Յիսուսի, թագաւոր եւ կեդրոն
ամենայն սրտից,
Սիրտ Յիսուսի, յորում են ամենայն
գանձք իմաստութեան եւ գիտու-
թեան,
Սիրտ Յիսուսի, յորում բնակի ամենայն
լութիւն Աստուածութեան,
Սիրտ Յիսուսի, ընդ որ Հայր Հաճեցաւ,
Սիրտ Յիսուսի, յորոյ մէջ ամենեքին
առաք ի րութեան անտի,
Սիրտ Յիսուսի, անձկալիլք բլրոց յաւի-
տենականաց,

նոր արարելու

Սիրտ Յիսուսի, երկայնամիտ եւ բա-
զումաղարմ,
Սիրտ Յիսուսի, բաւական յամենեւին
որք կարդան առ Քեզ,
Սիրտ Յիսուսի, աղբիւր կենաց եւ
սրբութեան,
Սիրտ Յիսուսի, քառութիւն մեղաց
մերոց,
Սիրտ Յիսուսի, յցեալ նախատանօք,
Սիրտ Յիսուսի, փշրեալ վասն մերոց
անօրէնութեանց,
Սիրտ Յիսուսի, լեալ Հնազանդ մահու
հափ,
Սիրտ Յիսուսի, ի խոր խոցեալ տի-
գաւ,
Սիրտ Յիսուսի, աղբիւր ամենայն մխի-
թարութեան,
Սիրտ Յիսուսի, կեանք մեր եւ յարու-
թիւն,
Սիրտ Յիսուսի, խաղաղութիւն մեր եւ
հաշտութիւն,
Սիրտ Յիսուսի, զոհ մեղաւորաց,
Սիրտ Յիսուսի, փրկութիւն ի Քեզ
յուսացելոյ,
Սիրտ Յիսուսի, յոյս ի քեզ ննջեցելոյ,
Սիրտ Յիսուսի, բերկրութիւն ամենայն
Սրբոց,

նոր արարելու

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս
աշխարհի, խնայեա ի մեզ Տէր:
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս
աշխարհի, անսա մեզ Տէր:
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս
աշխարհի, Ողորմա մեզ:
Յիսուս հեղ եւ խոնարհ սրտիւ.
Արա զսիրտ մեր ըստ սրտին քում:

Ա Ղ Օ Թ Ք

Աստուած ամենակարող եւ յաւիտե-
նական, հայեաց ի սիրտ Որդւոյ քոյ
ամենատիրելոյ եւ ի գոհութիւնս եւ ի
հատուցումն, զորս հատոյց քեզ յանուն
մեզանորայ. Գու հաշտեցուցեալ, որոց
եւ խնդրենն զողորմութիւն քո՝ Հնորհեա
զթողութիւն յանուն Որդւոյ քո նորին
Յիսուսի Քրիստոսի, որ կեայ Աստուած
ընդ քեզ եւ թագաւորէ ի միութեան
Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից.
Ամէն:

Տեսնոն մերոյ Յիսուսի Քրիստոսի խոստում-
նեքն ի նպաստ՝ իր Աստուածային Սրտին
մշմարիտ ջերմեանդութիւն ունեցող անձանց.

«ՅԵՐԱՆՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ ՄԱՐԻԱՄ»

1. Իրենց վիճակին կարեւոր ամէն
Հնորհքները պիտի պարգեւեւմ:
2. Իրենց ընտանեաց մէջ խաղաղու-
թիւն պիտի հաստատեւմ:
3. Իրենց ամէն ցաւերուն մէջ պիտի
մխիթարեմ զիրենք:
4. Կենաց ժամանակ եւ մանաւանդ
մահուան ատեն իրենց ապահով ազա-
տանը պիտի ըլլամ:
5. Իրենց ամէն ձեռնարկութեանց վրայ
առատ օրհնութիւններ պիտի սփռեմ:
6. Մեղաւորներն իմ Սրտիս մէջ պիտի
գտնեն գթութեան աղբիւրն եւ անհուն
ովկիանոսն:
7. Գաղջ հոգիները ջերմեանդու-
թեան պիտի գան:

8. Զերմեռանդ հոգիներն արագութեամբ մեծ կատարելութեան մը պիտի բարձրանան:

9. Պիտի օրհնեմ այն տուններն, ուր դրուած է եւ կը յարգուի իմ Սրտիս պատկերն:

10. Ամենէն աւելի կարծրացեալ սրտերն անգամ շարժելու ձիրքն ու տուրքը պիտի պարզ եւեմ քահանաներուն:

11. Այս ջերմեռանդութիւնը տարածող անձանց անունն իմ սրտիս մէջ գրուած մուտք պիտի ըլլայ եւ երբեք չպիտի ջնջուի անկէ:

12. Իմ Սրտիս բուռն գթութեամբ մղեալ, ամենակարող սէրս վերջին ապաշխարութեան, բարի մահուան շնորհքը պիտի պարգեւէ ինն ամիս անընդհատ, ամսուն առաջին ուրբաթ օրը հաղորդուող անձանց:



ՍԼԱԲԱԿԱՆ ԱՂԹՔ

ԱՌ

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ՍԻՐՏՆ ՅԵՍՈՒՍԻ

Գովեալ լիցի Յիսուս Գրիստոս, Յաւիտեանս յաւիտենից: (Կ-Տ) Ամէն:

50 օրուան ներող. Ամէն մէկ անգամին:

Վառեալքի մերսէր՝ Սիրտ Աստուածեղէն, ի սէր քո վառեալ բզիկտոս համօրէն:

100 օրուան ներող. Օրը մէկ անգամ:

Յիսուս, հեղ եւ խոնարհ սրբոյն, Արա՛ զսիրտ իմ ըստ Սրբոյն քում:

300 օրուան ներող. Օրը մէկ անգամ:

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, մի՛ ըլլար դատաւորս, այլ Փրկիչս:

100 օրուան ներող. Ամէն մէկ անգամին:

Ո՛վ Ամենասուրբ Սիրտ Յիսուսի, ի քեզ կը վստահիմ:

300 օրուան ներող. Ամէն մէկ անգամին:
Հիսկատ. ներող. Ամիսը մէկ անգամ:

Յիսուս իմ, գթութիւն:

100 օրուան ներող. Ամէն մէկ անգամին:

Յիսուս, Մարիամ:

300 օրուան ներող. Ամէն անգամ որ մէկը քերանացի կամ մոռէն ըսէ:





Р. У.

№ 7052